

## Նպատակ

Երեխայի ծննդյան դեպքում գործող հիփոթեքային վարկ ունեցող ընտանիքներին վարկի մայր գումարի մարման նպատակով դրամական աջակցության տրամադրում

## Դրամական աջակցության չափ

- 1) 1-ին կամ 2-րդ երեխայի ծննդյան դեպքում

### Երևան քաղաքում գնված բնակելի անշարժ գույքի համար կազմում է

- մնացորդային մայր գումարի 5%, սակայն ոչ ավել, քան 500 000 դրամ, եթե դիմողի տարիքը գերազանցում է 25 տարին,
- մնացորդային մայր գումարի 8%, սակայն ոչ ավել, քան 1 500 000 դրամ, եթե դիմողի տարիքը չի գերազանցում 25 տարին,

### ՀՀ մարզերում գնված բնակելի անշարժ գույքի համար կազմում է

- մնացորդային մայր գումարի 10%, սակայն ոչ ավել, քան 500 000 դրամ, եթե դիմողի տարիքը գերազանցում է 25 տարին,
- մնացորդային մայր գումարի 15%, սակայն ոչ ավել, քան 1 500 000 դրամ, եթե դիմողի տարիքը չի գերազանցում 25 տարին,

- 2) 3-րդ և հաջորդ երեխայի ծննդյան դեպքում,

### Երևան քաղաքում գնված բնակելի անշարժ գույքի համար կազմում է

- մնացորդային մայր գումարի 25%, սակայն ոչ ավել, քան 2 000 000 դրամ, եթե դիմողի տարիքը գերազանցում է 25 տարին,
- մնացորդային մայր գումարի 50%, սակայն ոչ ավել, քան 4 000 000 դրամ, եթե դիմողի տարիքը չի գերազանցում 25 տարին

### ՀՀ մարզերում գնված բնակելի անշարժ գույքի համար կազմում է

- մնացորդային մայր գումարի 35%, սակայն ոչ ավել, քան 2 000 000 դրամ, եթե դիմողի տարիքը գերազանցում է 25 տարին,
- մնացորդային մայր գումարի 70%, սակայն ոչ ավել, քան 4 000 000 դրամ, եթե դիմողի տարիքը չի գերազանցում 25 տարին:

## Հիմնական պայմաններ

- 1) Երեխան ծնվել է 2020 թվականի 01.07.2020թ. հետո,
- 2) վարկառուն առնվազն 12 ամիս կատարել է տվյալ հիփոթեքային վարկի գծով մարումներ, և վերջին 12 ամիսների ընթացքում ուշացած օրերի ընդհանուր քանակը չի գերազանցում 30 օրացուցային օրը,  
անշարժ գույքի գնահատված և շուկայական արժեքը չի գերազանցում 30 մլն դրամը, իսկ 3-րդ և հաջորդ երեխայի դեպքում նշված սահմանաչափն ավելացվում է ևս 5 մլն դրամով: